ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 214/78-1 «06» 11 2024 թ.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ՏԱՍՆԵՐՈՐԴԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝ ուսումնական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով.

հրամայում եմ

1. ԵՊՀ-ում գնահատումն իրականացվող 20 միավորային համակարգում կրթական վերջնարդյունքի ստուգման բոլոր բաղադրիչները գնահատել տասներորդական մասի պահպանմամբ՝ տվյալ դասընթացի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Դասընթացների արդյունարար գնահատականը նույնպես ամրագրվում է տասներորդական մասի պահպանմամբ:

2. Դասավանդողը սահմանում է գնահատման բոլոր բաղադրիչների առաջադրանքների արժեքը և ամրագրում դրանք դասընթացի պլանում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կիրառվում է 2024/2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և ուսանողներին:

ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ